ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 439
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի
ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Հաղթանակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Նոյեմբերյան համայնքի (Հաղթանակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Հաղթանակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի (Հաղթանակ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-043-0168-0025 կադաստրային ծածկագրով 0.01643 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր	11-043-0168-0025 կադաստրային ծածկագրով 0.01643 հա մակերեսով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների՝ կապի հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

- Անհրաժեշտ է բջջային կապի կայանի շահագործման ընթացքում պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի օգոստոսի 16-ի «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (ՌՀ ԷՄՃ)» սանիտարական կանոններ և նորմեր N 2.1.8-010-06 հաստատելու մասին» թիվ 933-Ն հրամանի պահանջները:

3. Նոյեմբերյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Հաղթանակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «30» «նոյեմբերիի» 2023 թ.